Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման մասնակիորեն, ուստի Դատարանը գտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Խաչպար» ՍՊ ընկերության պետք է բռնագանձել բավարարված հայցապահանջին համամասնորեն պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության՝ թիվ «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.11.2024 թվականին կայացած թիվ 2/2-րդ նիստի արձանագրության թիվ 1.1, թիվ 2 և թիվ 3 կետերով «Խաչպար» ՍՊ ընկերության մասով ընդունված որոշումներն անվավեր ճանաչելու, «ՈՒԱԿԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդում թիվ 5-րդ և 14-րդ չափաբաժինների մասերով «Խաչպար» ՍՊ ընկերության ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակիորեն.

1.1. անվավեր ճանաչել «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.11.2024 թվականի թիվ 2/2-րդ նիստի արձանագրության Խաչպար» ՍՊ ընկերության հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու և մերժելու մասին որոշումը,

1.2. որպես հետևանք՝ անվավեր ճանաչել գնահատող հանձնաժողովի 15.11.2024 թվականի՝ «Խաչպար» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը նախաձեռնելու մասին որոշումը:

2. Հայցը՝ մնացած մասով, մերժել:

3. ՀՀ առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «Խաչպար» ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am